

### **Հարց**

**Կազմակերպությունն իր կողմից հիմնադրված այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով անշարժ գույքի տեսքով ներդրում կատարելիս արդյո՞ք կրում է ավելացված արժեքի հարկի պարտավորություն:**

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ իր կողմից հիմնադրված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով անշարժ գույքի տեսքով ներդրում կատարելիս կազմակերպության համար առաջանում է ավելացված արժեքի հարկի հաշվարկման պարտավորություն:

### **Հարց**

**Հարկային մարմնի կողմից ստուգման ակտը ներկայացնելուց հետո ի՞նչ ժամկետում են վճարվում հարկի գումարներն ու տուգանքները:**

### **Պատասխան**

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողները թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև նույն օրենքի 23-28, 28<sup>3</sup>-28<sup>6</sup>-րդ և 32-րդ հոդվածների համաձայն հաշվարկված տույժերը և տուգանքները բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում:

Ստուգման ակտով առաջադրված հարկի գումարների նկատմամբ նշված տասնօրյա ժամկետում «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված տույժերը չեն հաշվարկվում: Այդ ժամկետը լրանալուց հետո ստուգման ակտով առաջադրված հարկի գումարների չվճարման կամ մասնակի վճարման դեպքում նույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված տույժերի հաշվարկի վերսկսման ժամանակ նշված տասնօրյա ժամկետը հաշվի չի առնվում:

### **Հարց**

**Խոհարարական արտադրանքի պատրաստումն ու առաքումը հարկման ի՞նչ համակարգով է հարկվում:**

### **Պատասխան**

Խոհարարական արտադրանքի պատրաստումն ու առաքումը հարկվում է ընդհանուր հարկման համակարգով՝ ավելացված արժեքի հարկով և շահութահարկով (եկամտային հարկով):

### **Հարց**

**Հարկային օրենսդրությամբ տուգանքի ինչպիսի՞ չափ է սահմանված ԼՂՀ օրենսդրությամբ արգելված գործունեությամբ զբաղվելու համար:**

### **Պատասխան**

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ

հողվածի համաձայն՝ ԼՂՀ օրենսդրությամբ արգելված գործունեությամբ զբաղվող անձանցից, գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս երեք միլիոն դրամից:

### **Հարց**

***Ո՞վ է հաշվետու անձը:***

### **Պատասխան**

«Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հաշվետու անձը կազմակերպության աշխատակիցն է կամ կառավարման մարմիններում ներգրավված անձը, որին գործուղման կամ կազմակերպության անունից վճարումներ կատարելու նպատակով տրվել է կանխիկ դրամ:

### **Հարց**

***Ի՞նչ պատասխանատվություն է առաջանում հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով (յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար) պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարն ավել ցույց տալու համար:***

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողին առաջադրվում է ավել հաշվարկված՝ պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարը, ինչպես նաև տուգանք, այդ գումարի 20 տոկոսի չափով, իսկ տուգանքը կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն տեսակի խախտումը կրկին կատարելու դեպքում՝ տուգանք՝ այդ գումարի 40 տոկոսի չափով:

### **Հարց**

***Ներառվում է արդյոք ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքը:***

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքը չի ներառվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ, բացառությամբ ապրանքների արտահանման դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ տարան իրացնում է անմիջական արտադրողը կամ ներմուծողը.

### **Հարց**

***Համարվում են արդյոք որպես նվազեցվող ծախս կամ հարկվող եկամուտ արտարժույթի փոխարկման գործարքներ իրականացնելիս ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված օրվա միջին փոխարժեքից փարբերվող այլ փոխարժեք կիրառելու դեպքում առաջացած փարբերությունները:***

### **Պատասխան**

Հարկվող շահույթը որոշելիս արտարժույթի փոխարկման գործարքներ իրականացնելիս ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված օրվա միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեք կիրառելու դեպքում առաջացած տարբերությունները (դրական կամ բացասական) դիտվում են որպես հարկվող եկամուտ կամ նվազեցվող ծախս: Ընդ որում՝

- Արտարժույթ ձեռք բերողի մոտ դրական տարբերությունները («Միջին փոխարժեք» - «Փաստացի կիրառված փոխարժեք» > 0) ներառվում են համախառն եկամտի, իսկ բացասական տարբերությունները («Միջին փոխարժեք» - «Փաստացի կիրառված փոխարժեք» < 0) ներառվում են համախառն եկամտից նվազեցվող ծախսերի մեջ:

- Արտարժույթ վաճառողի մոտ բացասական տարբերությունները («Միջին փոխարժեք» - «Փաստացի կիրառված փոխարժեք» < 0) ներառվում են համախառն եկամտի, իսկ դրական տարբերությունները («Միջին փոխարժեք» - «Փաստացի կիրառված փոխարժեք» > 0) ներառվում են համախառն եկամտից նվազեցվող ծախսերի մեջ:

### **Հարց**

***Եկամտի վճարման աղբյուրի մոտ ոչ ռեզիդենտի շահութահարկի պահումը (գանձումը) իրականացնելիս ինչպիսի՞ փոխարժեք է կիրառում հարկային գործակալը:***

### **Պատասխան**

Ոչ ռեզիդենտին եկամուտների փաստացի վճարման պահին գործող ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքից ելնելով, իսկ ոչ ռեզիդենտի կողմից դուրս գրված սկզբնական (հաշվառման) փաստաթղթերի և հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսաթվերի միջին փոխարժեքներով հաշվարկված ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարների միջև առաջացած տարբերությունը վերագնահատման արդյունք է, որը հաշվի չի առնվում շահութահարկը հաշվարկելիս: